

ՀԱՐՅՈՒՄ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ ԿԵՐՁԻՆ ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑՈՒՄ ԱՐԾԱՐԾՎԱԾ ԹԵՄԱՆԵՐԻ ԿԵՐԱԲԵՐՅԱԼ

5.01.2004թ. [համառոտ հաշվետվություն, հատվածներ]

Նոյեմբերի վերջին հասարակության ուշադրությունը բեռնվեց ՀՀ առաջին նախագահ Լևոն Տեր-Պետրոսյանի նկատմամբ: Միաժամանակ, կրկին ակտիվացան քննարկումները Ղարաբաղի խնդրի կարգավորման, պատերազմի վերսկսման հնարավորության, ՀՀԵ-ի ու Լեւոն Տեր-Պետրոսյանի ակտիվ քաղաքական գործունեության ասպարեզ վերադառնալու, նրանց վերադարձի հասարակական պահանջի առկայության շուրջ:

Հայ քաղաքական էլիտայի մեծամասնությունը, այդ թվում ՀՀ գործող նախագահ Ռմբերտ Քոչարյանը, հանդես եկան իրենց տեսակետներով ու մեկնաբանություններով:


Մեր գործընկեր բազմաթիվ քաղաքագետների առաջարկով մենք նախաձեռնեցինք հասարակական կարծիքի հարցում նույն հարցերի շուրջ՝ հասարակական կարծիքը եւ քաղաքական գործիչների տեսակետները համադրելու հնարավորություն ունենալու համար: Հատկապես այս դեպքում, երբ քաղաքագետները դատողություններ են անում «հասարակական պահանջի» առկայության կամ բացակայության մասին:

Հետազոտությունը **Vox Populi** կենտրոնն անցկացրել է Երեւան քաղաքի բնակչության շրջանում նոյեմբերի 28-ից մինչեւ դեկտեմբերի 3-ը: Ընդամենը հարցվել է 18 եւ ավելի տարիքի 668 երեւանցի: Հարցման մեթոդը՝ հեռախոսային, պատահական, չկրկնվող: Ընտրանքը ներկայացուցչական է ըստ սեռատարիքային հատկանիշների: Հարցերի քանակը հարցաթերթիկում՝ 8:

Ստորեւ ներկայացնում ենք հարցվողներին առաջարկված մի քանի հարցերը եւ դրանց տրված պատասխանները գրաֆիկական եւ աղյուսակային տեսքով:


«ԿԱՐԴԱՅԵ՛Լ ԵՔ, ԾԱՆՈԹ ԵՔ ԹԵ ԼՍԵԼ ԵՔ ՀՀ ԱՈԱԶԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԼԵՎՈՆ ՏԵՐ-ՊԵՏՐՈՍՅԱՆԻ «ՊԱՏԵՐԱԶՄ, ԹԵ ԽԱՂԱՂՈՒԹՅՈՒՆ» ՀՈՂՎԱԾԻ ՄԱՍԻՆ»:

Կարդացել եմ	1.3%
լսել եմ (չեմ կարդացել), տեղյակ եմ հողվածի բովանդակությանը	19.4%
լսել եմ, ծանոթ չեմ բովանդակությանը	21.8%
չեմ լսել, տեղյակ չեմ	57.5%




«Հավանակա՞ն եք համարում արդյոք պատերազմի վերսկսման հնարավորությունը Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ»:

Շատ հավանական է	21%
որոշակիորեն հավանական է	37%
քիչ հավանական է	22%
բացառվում է	13%
իմ վարանում եմ պատասխանել	7%




«Համաձայ՞ն եք արդյոք որոշ քաղաքական գործիչների կողմից արտահայտվող այն տեսակետին, որ Ղարաբաղի հարցի կարգավորման արդյունքում «Մենք այլեւս չենք ստանալու այն, ինչ կարող էինք ստանալ 1997 թ.-ին»»:

Լիովին համաձայն եմ	35%
մասամբ համաձայն եմ	21%
համաձայն չեմ	23%
իմ վարանում եմ պատասխանել	21%



«Ըստ Ձեզ, ո՞վ կարող է ավելի արդյունավետ լուծել Ղարաբաղի խնդիրը՝ Ռ. Քոչարյանը, թե Լ. Տեր-Պետրոսյանը»:

Ռ. Քոչարյանը	26%
Լ. Տեր-Պետրոսյանը	21%
ոչ մեկը	29%
իմ վարանում եմ պատասխանել	24%



«Ընտրական համակարգեր» կենտրոնի

Vox Populi հասարակական կարծիքի ուսումնասիրման կենտրոն

հեռ.՝ + 374 9 38 96 60

e-mail: voxpopuli@expert.am, info@persons.am, info@expert.am

www.persons.am, www.expert.am